ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի 894-Ա որոշմամբ ստեղծված «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից ֆինանսավորման հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստ

ք.Երևան ժամը՝ 14:00
03.12.2021թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ն.Բուդոյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ,
Ն. Մարգարյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի ավագ մասնագետ,
Ն. Զաստուխովա	արտաքին գործերի նա¦խարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության խորհրդական,
Գ.Կոշեցյան	բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ,
Ա. Սաղաթելյան	էկոնոմիկայի նախարարության հանրային ներդրումների վարչության ավագ մասնագետ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից՝ Կոնվենցիայի ներքո երկրի ֆինանսավորման հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստի քննարկում և աշխատանքային խմբի ղեկավարի ընտրություն:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Հայաստանի կլիմայական օրակարգը, մասնավորապես կլիմայական բաղադրիչի ներառման կարևորությունը ոլորտային քաղաքականությունների մեջ, ֆինանսական աջակցության ստացման հնարավորությունները կլիմայական բազմակողմ հիմնադրամներից և երկրի հաշվետվողականության ձևաչափի փոփոխությունը համաձայն նոր պահանջների:

Տկն.Զաստուխովան առաջարկեց լրացումներ կատարել փոխվարչապետի 2021 թվականի N894-Ա որոշման մեջ, ընդլայնել աշխատանքային խմբի կազմը՝ ներգրավվելով նաև

ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանից, տուրիզմի, տրանսպորտի, թափոնների ոլորտներից:

Քննարկվել են նաև աշխատակարգի հետ կապված հարցեր և նախանշվել խմբի գործունեության հետ կապված հետագա քայլերը: Մասնակիցների ձայների մեծամասնությամբ Նոնա Բուդոյանն ընտրվեց որպես աշխատանքային խմբի ղեկավար:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ԲՈՒԴՈՅԱՆ

Արձանագրեց՝
Ա. Ղուկասյանը